01/10.5/10188-12
2012-07-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահագն Մախսուդյանի և Խաչիկ Հարությունյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կիսում է նախագծի հեղինակների մտահոգությունը Սևանա լճի էկոհամակարգի պահպանման վերաբերյալ: Միևնույն ժամանակ խնդրի ամբողջական կարգավորման նպատակով առաջարկում ենք նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝

«Հոդված 2. Սույն օրենքը չի տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման լիցենզիա ստացած իրավաբանական անձանց վրա:»:

Այդ կապակցությամբ նախագծի 2-րդ հոդվածը համարել 3-րդ հոդված:

Օրենսդրական տեխնիկայի պահանջները պահպանելու նպատակով առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածում «խմբագրությամբ» բառը փոխարինել «բովանդակությամբ» բառով:

Հայտնում ենք նաև, որ Սևանա լիճ թափվող գետերի էկոլոգիական վիճակի բարելավման և ձկնաշխարհի վերականգնման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի նիստի N 3 արձանագրային որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 30 արձանագրային որոշման 22-րդ կետով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի նիստի «Փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեմային հավանություն տալու մասին» N 3 արձանագրային որոշման 9-րդ կետով հավանության արժանացած փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեմայի հավելվածի «Սևանա լճի ավազան» բաժինը՝ բացառելով լճի ավազանում նոր ՓՀԷԿ-երի կառուցումը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը:

Նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում՝

«Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27[1] հոդվածով, համաձայն ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման՝ իրականացվել է «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատում, համաձայն որի՝ նախագիծը սոցիալական պաշտպանության ոլորտում ունի չեզոք ազդեցություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում

կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

««Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման արգելմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները առնչվում են էլեկտրաէներգիայի, մասնավորապես՝ հիդրոէլեկտրոկայանների կողմից էներգիայի մատակարարման ծառայությունների շուկաների հետ:

Նախագծով արգելվում է Սևանա լճի կենտրոնական, անմիջական, ոչ անմիջական ազդեցության գոտիներում փոքր հիդրոէլեկտրոկայանների կառուցումը:

Ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլում առանցքային ուղղություններով կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Նախագծի ընդունմամբ սահմանափակվում է աշխարհագրական տարածքը, որտեղ մատակարարը կարող է գործել: Սակայն հաշվի առնելով, որ սահմանափակումը

վերաբերում է միայն Սևանա լճի կենտրոնական, անմիջական, ոչ անմիջական ազդեցության գոտիներում փոքր հիդրոէլեկտրոկայանների կառուցմանը, Նախագծի ընդունմամբ ՀՀ տարածքում փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից էլեկտրաէներգիայի մատակարարման շուկայում մրցակցության միջավայրի վրա զգալի ազդեցություն չի լինի:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ արձանագրվել է Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *զգալի ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝օրենք) նախագծով նախատեսվող լրացումը վերաբերում է Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման արգելմանը՝ հետևապես դրա ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ հետևանքներ չեն կարող առաջանալ:

2. Օրենքի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ կարող են առաջանալ, քանի որ՝

1) փոքր հիդրոէլեկտրակայանների համար անհրաժեշտ ջրառը՝ նվազեցնելով գետերի բնականոն հոսքը, խոչընդոտում է ձկների, մասնավորապես, իշխանի բնական վերարտադրությանը և բացասական ազդեցություն է ունենում բնական ջրահոսքերի էկոհամակարգի վրա,

2) բացասական ազդեցություն կունենա Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների բնական վերարտադրությունն ապահովելու և ձվադրավայրերը պահպանելու գործընթացի վրա, քանի որ այդ ձկնատեսակները ձվադրում են լիճ թափվող գետերում, իսկ ձվադրման ժամանակահատվածում ջրի քանակական և որակական հատկանիշների ապահովումը շատ կարևոր պայման է:

3) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը պահանջում է հողհատկացում, դերիվացիոն կառույցների և խողովակաշարերի տեղադրում, ինչը բացասական

ազդեցություն կունենա կենսաբազմազանության վրա,

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին ուղղակիորեն առնչվում է սակայն այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում, այլ նպաստում է այդ սկզբունքների և պահանջների պահպանմանը:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի կապակցությամբ ՀՀ կառավարության 10.09.2009թ. թիվ 1021-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

1. Նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման առարկան և արդյունքները.

Նախագծով առաջարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արգելել Սևանա լճի ավազանում փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը՝ հաշվի առնելով բնական ջրհոսքերում ջրային էկոհամակարգի, մասնավորապես ձկնային աշխարհի վրա բացասական ազդեցությունը: Նախագծի ընդունումը կնպաստի Սևանա լճի ավազանում ձկնատեսակների ձվադրման ժամանակահատվածում ջրի քանակական և որակական անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

2 Նորմատիվ իրավական ակտի նախագծի ընդունման կամ չընդունման դեպքում՝ դրանց կիրարկման ադյունքում կանխատեսվող հետևանքները և բյուջետային բնագավառի վրա դրանց ազդեցությունն ըստ ժամկետների.

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ Նախագիծը միտված է սահմանելու Սևանա լճի ավազանում բնական միջավայրի վրա բացասական ազդեցությունների

նվազեցմանը, մի շարք ծկնատեսակների բազմացմանը, ինչպես նաև հիմք ընդունելով ««Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին կից ներկայացված վերոնշյալ նախագծի ընդունման դեպքում պետական բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին տեղեկանքը, գտնում ենք, որ Նախագծի ընդունումը կամ չընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի առաջացնի:

Պ-010- 21.06.2012-ԳԲ-010/0 ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ- 190 օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետում լրացնել ե ենթակետ հետևյալ խմբագրությամբ՝

«ե/ փոքր հիդրոէլեկտրոկայանների կառուցումը:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Սույն օրենքի ընդունումը պայմանավորված է նրանով, որ հանրապետությունում մեծ թափ է ստացել ՓՀԷԿ-երի կառուցման գործընթացը: Որպես վերականգնվող էներգառեսուրսով աշխատող էներգետիկայի օբյեկտներ, այդ կայանները բնապահպանական տեսակետից ունեն որոշ դրական ազդեցություն, քանի որ դրանց գործարկումը չի ուղեկցվում մթնոլորտ վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետմամբ, սակայն ՓԷՀԿ-երն ունեն մի շարք թերություններ, որոնք բացասաբար են ազդում բնական միջավայրի վրա:

- ՓՀԷԿ-երի կառուցումն անխուսափելիորեն ուղեկցվում է հողհատկացումով, կենսաբազմազանության վրա բացասական ներգործությամբ, հատկապես ջրաթեք (դերիվացիոն) կառույցների և ճնշումային խողովակների տեղադրման արդյունքում:
- Ջրառի հետևանքով ՓՀԸԿ-երն ունեն զգալի բացասական ներգործություն բնական ջրահոսքերում ջրային էկոհամակարգերի և, առանձնապես, ձկնային աշխարհի վրա:

Ներկայումս գործող ջրառի սահմանափակումները կրում են զուտ սանիտարական բնույթ և չեն ապահովում ջրային էկոհամակարգերի պահպանության անհրաժեշտ մակարդակ:

Առանձին հիմնախնդիր է Սևանա լճի ավազանի գետերի վրա ՓՀԸԿ-երի տեղադրման հարցը: Սիգ և լճածածան ձկնատեսակներից բացի, որոնք բնակվում և բազմանում են լճում, Սևանի իշխանի պահպանված երկու ենթատեսակները (գեղարքունի, ամառային իշխան), կողակ և բեղածուկ (բեղլու) ձկնատեսակները ձվադրում են լիճ թափվող գետերում և չափազանց կարևոր է ձվադրման ժամանակահատվածում գետերում ապահովել ջրի քանակական և որակական անհրաժեշտ պայմաններ: